«Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2025թ դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

Բովանդակություն

Համախմբված ֆինանսական արդյունքների և չբաշխված
շահույթների մասին հաշվետվություն 3
Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 4
Համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 5
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 6

	Ծնթգ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Հասույթ	4	409,154	419,680
Վաճառքի ինքնարժեք	5	(316,956)	(366,399)
Համախառն շահույթ		**92,198**	**53,281**
Վարչական ծախսեր	6	(7,680)	(6,510)
Այլ եկամուտներ	7	2,334	2,346
Այլ ծախսեր		(11)	(150)
Ֆինանսական եկամուտներ	8	936	104
Ֆինանսական ծախսեր	8	(5,955)	(186)
Շահույթ մինչև հարկումը		**81,822**	**48,885**
Շահութահարկի գծով ծախս	9	(14,655)	(8,065)
Տարվա շահույթ		**67,167**	**40,820**
Մայր կազմակերպության սեփականատերերին վերագրելի		67,257	40,920
Չվերահսկող բաժնեմասին վերագրելի		(90)	(100)
Չբաշխված շահույթներ տարվա սկզբի դրությամբ		**57,728**	**86,908**
Մայր կազմակերպության սեփականատերերին վերագրելի		58,843	87,923
Չվերահսկող բաժնեմասին վերագրելի		(1,115)	(1,015)
Շահաբաժիններ	10	**(40,000)**	**(70,000)**
Մայր կազմակերպության սեփականատերերին		(40,000)	(70,000)
Չվերահսկող բաժնեմասին		-	-
Չբաշխված շահույթներ տարվա վերջի դրությամբ		**84,895**	**57,728**
Մայր կազմակերպության սեփականատերերին վերագրելի		86,100	58,843
Չվերահսկող բաժնեմասին վերագրելի		(1,205)	(1,115)

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Խմբի ղեկավարության կողմից 2025թ.-ի մարտի 2-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հովհաննես Պետրոսյան
Տնօրեն

Արուսյակ Ազիզյան
Գլխավոր հաշվապահ

Համախմբված ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 6-ից 24-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	218,869	2,302
Ոչ նյութական ակտիվներ	12	30	40
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռքբերելու համար		9,174	-
Հետաձգված հարկային ակտիվ	13	1,433	1,259
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**229,506**	**3,601**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	14	23,292	1,888
Իրական արժեքով չափվող ներդրումներ	15	1,066	942
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	23,819	39,119
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	58,070	39,522
Այլ ակտիվներ		241	215
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**106,488**	**81,686**
Ընդամենը ակտիվներ		**335,994**	**85,287**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կանոնադրական կապիտալ	18	2,000	2,000
Պահուստային կապիտալ		600	600
Չբաշխված շահույթ		86,100	58,843
Ընդամենը մայր կազմակերպությանը վերագրելի սեփական կապիտալ		**88,700**	**61,443**
Չվերահսկվող բաժնեմաս		1,095	1,185
Ընդամենը սեփական կապիտալ		**89,795**	**62,628**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	143,578	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**143,578**	**-**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկերի և փոխառությունների ընթացիկ մաս	19	12,466	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20	90,155	22,659
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**102,621**	**22,659**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**335,994**	**85,287**

Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 6-ից 24-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ

	Ծնթգ.	2025թ հազ. դրամ	2024թ հազ. դրամ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ			
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ		517,540	523,052
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ		(35,621)	(39,979)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ		(306,236)	(336,998)
Շահութահարկի գծով վճարումներ		(6,008)	(17,223)
Շահութահարկի գերավճարի հետվերադարձ		985	-
Վճարված հարկեր, բացառությամբ շահութահարկի		(65,107)	(74,654)
Վճարված ԱԱՀ-ի հետվերադարձ		28,517	-
Վճարված տոկոսներ		(5,141)	-
Բանկային մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսների ստացում		221	317
Բանկային ծառայության ծախսեր		(616)	(138)
Բարեգործական ծախսեր		-	(150)
Դրամական միջոցների հոսքեր ստացված գործառնական գործունեությունից		**128,534**	**54,227**
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(261,486)	(291)
Ներդրված ավանդներ		(32,000)	-
Ներդրված ավանդի հետվերադարձ		32,000	-
Դրամական միջոցների հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում		**(261,486)**	**(291)**
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ			
Ստացված վարկեր	19	154,623	-
Մարված վարկեր		(3,015)	-
Վճարված շահաբաժիններ		-	(70,000)
Դրամական միջոցների հոսքեր օգտագործված ֆինանսավորման գործունեությունում		**151,608**	**(70,000)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**18,656**	**(16,064)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		39,522	55,772
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(108)	(186)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	17	**58,070**	**39,522**

Համախմբված դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի 6-ից 24-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ

1. Ընդհանուր տեղեկատվություն

«Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցված փակ բաժնետիրական ընկերություն է:

Ընկերությունը գրանցվել է 2005 թվականի հոկտեմբերի 19-ին և մատուցում է հաշվապահական, հարկային և ֆինանսական խորհրդատվական ծառայություններ: 2019 թվականի փետրվարի 21-ին Ընկերությունը ստացել է թիվ ԱԾ 102 աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա և սկսել է մատուցել է նաև աուդիտորական ծառայություններ:

Ընկերությունը «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) անդամ է դարձել Պալատի խորհրդի 2020թ դեկտեմբերի 18-ի թիվ 11-Ա որոշման հիման վրա և 2020թ դեկտեմբերի 21-ին գրանցվել է Պալատի ռեեստրում: Ընկերության հիմնական գրանցման գրառման համարն է (ՀԳԳՀ) 1.20.02.02

Ընկերությունը 2019թ մարտից Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերը և դրամաշնորհները աուդիտի ենթարկելու իրավասություն է ստացել:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 15ա:

Հաշվետվության ներկայացման ամսաթվի դրությամբ Ընկերության մասնակիցներն են.

- Հովհաննես Պետրոսյան, որակավորված աուդիտոր ՝ 55.05% մասնակցություն
- Վիգեն Եղոյան, որակավորված աուդիտոր ՝ 29.95% մասնակցություն
- Դավիթ Անանյան, որակավորված աուդիտոր՝ 15.00% մասնակցություն

2025 թվականի ընթացքում Ընկերությունը ձեռք է բերել գրասենյակային տարածք Կոմիտաս 59/12 հասցեում և կատարել է այդ տարածքի վերանորոգման աշխատանքներ: 2026 թվականի մարտի 1-ից Ընկերությունն իր գործունեությունը սկսել է ծավալել վերոնշյալ հասցեում:

2009 թվականին Ընկերությունը հիմնադրել է դուստր կազմակերպություն՝ «Փի–Էյջ–Փի Աուդիտ» ՓԲԸ–ն (այսուհետ՝ դուստր ընկերություն): Դուստր ընկերության հիմնական գործունեությունն էր աուդիտի և հարակից ծառայությունների մատուցումը: 2019 թվականի փետրվարի 1-ից դուստր ընկերության աուդիտորական գործունեության լիցենզիան կասեցվել է, գործունեությունը անորոշ ժամկետով դադարեցվել է 2019 թվականի մայիսի 1-ից և դուստր ընկերության գործառույթները ամբողջությամբ ինտեգրվել են Ընկերության գործառույթների կազմում:

Հաշվետվության ներկայացման ամսաթվի դրությամբ դուստրի ընկերության մասնակիցներն են.

- «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ՝ 50% մասնակցություն
- Դավիթ Եդիգարյան, որակավորված աուդիտոր՝ 50% մասնակցություն

«Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ն վերահսկում է «Փի-Էյջ-Փի Աուդիտ» ՓԲԸ-ին:
Վերահսկողությունը պայմանավորված է նրանով, որ

- «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ին է պատկանում Ընկերության բաժնետոմսերի 50 տոկոսը,
- Ձևավորված փորձի հիման վրա «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ն իրավունք ունի նշանակել տնօրենին և խորհրդի անդամներին:

Խմբի վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում պարոն Հովհաննես Պետրոսյանը:

2. Պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական

հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն:

(բ) Անընդհատության հիմունք

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքի հիման վրա, ինչը ենթադրում է, որ Խմբի ակտիվները կիրացվեն և պարտավորությունները կմարվեն Խմբի բնականոն գործունեության ընթացքում՝ առանց որևէ մտադրության Խմբի գործունեությունը տեսանելի ապագայում դադարեցնելու կամ Խումբը լուծարելու: Այնուամենայնիվ, դուստր ընկերությունը անորոշ ժամկետով դադարեցրել է իր գործունեությունը և ղեկավարության գնահատմամբ դուստր ընկերության անընդհատ գործելու կարողությունը տեսանելի ապագայում կասկածի տակ է: Դուստր ընկերության անընդհատ գործելու կարողության խաթարումը ազդեցություն չունի Ընկերության և Խմբի անընդհատ գործելու կարողության վրա:

(գ) Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Բացառություն են կազմում իրական արժեքով չափվող ներդրումները:

(դ) Չափման և ներկայացման արժույթ

Խմբի ֆունկցիոնալ արժույթը և համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթ ՀՀ դրամն է (դրամ): Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց համար հիմք հանդիսացող ենթադրությունները կանոնավոր կերպով վերանայվում են:

Հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները ճանաչվում են առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունը ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա,

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը՝ օգտակար ծառայության ժամկետների գնահատումները ներկայացված են հիմնական միջոցների համար 3 (ա), իսկ ոչ նյութական ակտիվների համար՝ 3 (բ) ծանոթագրություններում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում

- Ծանոթագրություն 4 - Հասույթ, ավարտվածության աստիճանի գնահատում.
- Ծանոթագրություն 11 – Հիմնական միջոցներ, օգտակար ծառայության ժամկետների գնահատում.
- Ծանոթագրություն 12 – Ոչ նյութական ակտիվներ, օգտակար ծառայության ժամկետների գնահատում.
- Ծանոթագրություն 15 – Իրական արժեքով չափվող ներդրումներ, իրական արժեքի գնահատում:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ծանոթագրություն 3(ա)-ից 3(ժգ) կետերում ներկայացված հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման այս քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

(ա) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների հոդվածները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստը:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ հիմնական միջոցը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին հոդվածներ (նշանակալի բաղադրիչ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը ճանաչվում են այլ եկամուտների/այլ ծախսերի կազմում ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվությունում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների հոդվածի բաղկացուցչի փոխարինման ծախսումները ճանաչվում են հոդվածի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվությունում՝ կատարելուն պես:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մաշվածության ծախսումները ներառվում են այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ հիմնական միջոցը մատչելի է օգտագործման համար: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

	2025թ	2024թ
Սարքավորումներ	8-10 տարի	8-10 տարի
Համակարգչային տեխնիկա	3 տարի	3 տարի
Տնտեսական գույք	1-10 տարի	1-10 տարի

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(բ) Ոչ նյութական ակտիվներ

(i) Ճանաչում և չափում

Խմբի կողմից ձեռքբերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

(ii) Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

	2025թ	2024թ
Համակարգչային ծրագիր օգտ. իրավունք	10 տարի	10 տարի
Դոմեյն	5 տարի	5 տարի

(գ) Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Խմբին են փոխանցվում սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական վարձակալությամբ ձեռքբերված ակտիվները չափվում են իրական արժեքից և նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքից նվազագույնով: Սկզբնական ճանաչումից հետո ակտիվը հաշվառվում է տվյալ ակտիվի հանդեպ կիրառելի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Ֆինանսական վարձակայություն չհանդիսացող վարձակալությունը գործառնական վարձակալություն է:

Գործառնական վարձակալության դեպքում վարձակալված ակտիվները չեն ճանաչվում Խմբի համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Խումբը չեղյալ չհամարվող գործառնական վարձակալություններ չունի:

(դ) Պաշարներ

Ծառայությունների գծով պաշարները ներառում են ծառայության ծախսումները, որոնց գծով կազմակերպությունը դեռևս չի ճանաչել համապատասխան հասույթը, ինչպես նաև նյութերը, որոնք պահվում են ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Խումբը պաշարները չափում է ինքնարժեքով: Ծառայությունների ինքնարժեքը հաշվարկվում է փաստացի կատարված արտադրական ծախսումների հանրագումարով (փաստացի ինքնարժեք):

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է՝ արդյոք պաշարներն արժեզրկված են, թե՝ ոչ: Եթե պաշարների որևէ հոդված (կամ համանման հոդվածների խումբ) արժեզրկված է, Խումբը նվազեցնում է պաշարի (կամ խմբի) հաշվեկշռային արժեքը՝ այն հասցնելով դրա վաճառքի գնին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները: Այդ նվազումը արժեզրկումից կորուստն է և անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Վաճառված կամ այլ ձևով հատուցման դիմաց օտարված պաշարների հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

Պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ առաջացել է կորուստը:

(ե) Պահուստներ

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է:

Պահուստը ճանաչվում է, երբ որպես անցյալ դեպքերի արդյունք Խումբն ունի իրավական կամ կառուցողական ներկա պարտականություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչ հարկումը կիրառելի այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի ներկա շուկայական գնահատականը և պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(զ) Արտարժույթով գործառնություններ

Խումբն արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված արտարժութային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը: Գործառնության ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, երբ գործառնությունն առաջին անգամ որակվում է որպես ճանաչման ենթակա՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Խումբը՝

ա) վերահաշվարկում է արտարժույթով դրամային հոդվածները կիրառելով փակման փոխարժեքը.

բ) ներկայացնում է սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով:

Խումբը փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ համախմբված ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

(է) Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Խումբը փոխառությունը և դեբիտորական պարտքը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է միայն այն դեպքում, երբ դառնում է ֆինանսական գործարքի պայմանագրային կողմ և որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ ստանալու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

Սկզբնական ճանաչման պահին Խումբը փոխառությունը և դեբիտորական պատքը չափում է տվյալ փոխառության կամ դեբիտորական պարտքի իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են տվյալ փոխառության կամ դեբիտորական պարտքի տրամադրմանը կամ առաջացմանը:

Անտոկոս կամ ցածր տոկոսով փոխառության և դեբիտորական պարտքի իրական արժեքը որոշվում է այդ փոխառության և դեբիտորական պարտքի գծով ապագայում ստացվելիք դրամական միջոցների՝ շուկայական տոկոսադրույքով զեղչված արժեքով:

Կարճաժամկետ անտոկոս դեբիտորական պարտքի իրական արժեքը համապատասխան հաշիվ-ապրանքագրի (կամ նմանատիպ այլ փաստաթղթի) համաձայն ստացման ենթակա միջոցների չզեղչված գումարն է:

Կարճաժամկետ անտոկոս փոխառության իրական արժեքը փոխառության անվանական արժեքն է: Նման դեպքում ստացման ենթակա դրամական միջոցների զեղչում չի իրականացվում:

Անտոկոս փոխառության իրական արժեքը, որի մարումը Խումբը կարող է ցանկացած պահի պահանջել, հանդիսանում է փոխառության անվանական արժեքը: Նման դեպքում ստացման ենթակա դրամական միջոցների զեղչում չի իրականացվում:

Սկզբնական ճանաչումից հետո Խումբը փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կարճաժամկետ անտոկոս դեբիտորական պարտքերը և փոխառությունները սկզբնական ճանաչումից հետո չափվում են այն արժեքով, որով նրանք չափվել էին սկզբնական ճանաչման պահին:

Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ փոխառությունների և դեբիտորական պարտքերի գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորուստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(ը) Կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ

Խումբը կրեդիտորական պարտքը և ստացված փոխառությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է միայն այն դեպքում, երբ դառնում է ֆինանսական գործարքի պայմանագրային կողմ և որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ վճարելու իրավական պարտավորություն:

Սկզբնական ճանաչման պահին Խումբը կրեդիտորական պարտքը և ստացված փոխառությունը չափում է տվյալ կրեդիտորական պարտքի կամ ստացված փոխառության իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են տվյալ կրեդիտորական պարտքի կամ փոխառության առաջացմանը կամ ստացմանը:

Անտոկոս կամ ցածր տոկոսով կրեդիտորական պարտքի և ստացված փոխառության իրական արժեքը որոշվում է այդ կրեդիտորական պարտքի և ստացված փոխառության գծով ապագայում վճարվելիք դրամական միջոցների՝ շուկայական տոկոսադրույքով զեղչված արժեքով:

Կարճաժամկետ անտոկոս կրեդիտորական պարտքի իրական արժեքը համապատասխան հաշիվ-ապրանքագրի (կամ նմանատիպ այլ փաստաթղթի) համաձայն ստացման ենթակա դրամական միջոցների չզեղչված գումարն է:

Կարճաժամկետ անտոկոս ստացված փոխառության իրական արժեքը փոխառության անվանական արժեքն է: Նման դեպքում վճարման ենթակա դրամական միջոցների զեղչում չի իրականացվում:

Անտոկոս ստացված փոխառության իրական արժեքը, որի մարումը Խմբից ցանկացած պահի կարող է պահանջվել, հանդիսանում է փոխառության անվանական արժեքը: Նման դեպքում վճարման ենթակա դրամական միջոցների զեղչում չի իրականացվում:

Սկզբնական ճանաչումից հետո Խումբը կրեդիտորական պարտքերը և ստացված փոխառությունները չափում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կարճաժամկետ անտոկոս կրեդիտորական պարտքերը և ստացված փոխառությունները սկզբնական ճանաչումից հետո չափվում են այն արժեքով, որով նրանք չափվել էին սկզբնական ճանաչման պահին:

(թ) Սխալներ

Որքանով իրագործելի է, Խումբը որևէ նախորդ ժամանակաշրջանի էական սխալները ուղղում է հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին համախմբված ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդ ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որում տեղի է ունեցել համապատասխան սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը՝ ապա վերահաշվարկելով ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

(ժ) Հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Խմբի սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի:

Խումբը հասույթը չափում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Խմբի հասույթը ձևավորվում է աուդիտորական և խորհրդատվական ծառայությունների մատուցումից:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

- Հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- Հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Խումբ,
- Հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանը, և
- Հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Գործարքի ավարտվածության աստիճանը որոշվում է ներքոթվարկյալ մեթոդներից որևէ մեկով (կիրառվում է տվյալ դեպքի համար առավել տեղին մեթոդը)՝

- Կատարված աշխատանքների ուսումնասիրություն,
- Տվյալ ամսաթվի դրությամբ մատուցված ծառայությունների ծավալի և մատուցվելիք ծառայությունների ամբողջ ծավալի հարաբերություն:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն:

(ժա) Վաճառքի ինքնարժեք

Ծառայությունների մատուցման ծախսումները ներառում են՝

- այն ծախսումները, որոնք ուղակիորեն վերաբերում են կոնկրետ մատուցված ծառայությանը,
- այն ծախսումները, որոնք վերագրվում են ընդհանուր ծառայությունների մատուցմանը և կարող են վերագրվել տվյալ ծառայությանը,
- այն ծախսումները, որոնք, ծառայության պայմանագրի պայմանների համաձայն, հատուկ գանձվում են պատվիրատուից:

Կոնկրետ մատուցված ծառայությանն ուղղակիորեն վերաբերող ծախսումներն են ծառայության մատուցման աշխատանքներում ընդգրկված աշխատակիցներին հատուցումները, օգտագործվող հիմնական միջոցների մաշվածությունը, այլ կազմակերպություններից ստացված խորհրդատվական ծառայությունները:

Այն ծախսումները, որոնք վերագրվում են ընդհանուր պայմանագրի գործունեությանը և կարող են վերագրվել կոնկրետ պայմանագրին, ընդգրկում են վարձակալական վճարները:

Ծախսումները, որոնք չեն կարող վերագրվել պայմանագրի գործունեությանը կամ չեն կարող վերագրվել պայմանագրին, չեն ներառվում ծառայությունների մատուցման ծախսումների մեջ:

(ժբ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումներից ստացվելիք տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից ստացված օգուտը: Տոկոսային եկամուտը շահույթում կամ վնասում ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսերը, պահուստների գծով զեղչի վերականգնումը, փոխարժեքային տարբերություններից առաջացած վնասը և ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները: Վարկերի և փոխառությունների գծով բոլոր ծախսերը ճանաչվում են շահույթ կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտներն ու վնասները ներկայացվում են զուտ հիմունքով:

(ժգ) Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը (հարկը) ընթացիկ ժամանակաշրջանի կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկ է:

Հետաձգված շահութահարկը (հարկը) ապագա ժամանակաշրջաններում վճարման կամ փոխհատուցման ենթակա հարկ է, որը սովորաբար Խմբի կողմից իր ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ հաշվեկշռային արժեքով փոխհատուցելու կամ մարելու արդյունք է, ինչպես նաև տվյալ պահին չօգտագործված հարկային վնասները հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հարկային հետևանք:

Խումբը ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթից վճարվելիք հարկի գծով ճանաչում է ընթացիկ հարկային պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարվելիք գումարը, Խումբն այդ գերազանցող մասը ճանաչում է որպես ընթացիկ հարկային ակտիվ:

Խումբն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի հարկային մարմիններին (կփոխհատուցվի հարկային մարմինների կողմից)՝ կիրառելով հարկերի դրույքները և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

Խումբն ընթացիկ հարկային պարտավորության կամ ընթացիկ հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս:

Խումբն ապագա ժամանակաշրջաններում՝ որպես անցյալ գործարքների կամ դեպքերի արդյունք, փոխհատուցվելիք կամ վճարվելիք հարկի համար ճանաչում է հետաձգված հարկային ակտիվ կամ հետաձգված հարկային պարտավորություն:

Խումբը հետաձգված հարկային պարտավորության կամ հետաձգված հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս:

Խումբը ճանաչում է հետաձգված հարկային ակտիվների հետ կապված գնահատման պահուստ այնպես, որ զուտ հաշվեկշռային արժեքը հավասար լինի այն ամենաբարձր գումարին, որը ավելի շատ հավանական է, քան՝ ոչ, որ կփոխհատուցվի ընթացիկ կամ ապագա հարկվող շահույթի հիման վրա:

4. Հասույթ

	2025թ.	2024թ.
	հազ. Դրամ	հազ. դրամ
Հաշվապահական հաշվառման վարում	217,730	230,875
Խորհրդատվություն	162,892	155,728
Աուդիտ և աուդիտորական դիտարկում	15,510	17,487
Համաձայնեցված ընթացակարգեր	8,330	8,390
Գույքագրում	4,692	7,200
	409,154	**419,680**

Մատուցված ծառայությունների գծով գումարները ճանաչվում են որպես հասույթ ծրագրի ավարտվածության աստիճանի հիման վրա՝ համաձայն 3(ժ) ծանոթագրությունում նկարագրված մեթոդի:

Ծառայությունների գծով հաշվեգրված հասույթը հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ մատուցված ծառայությունների ծավալի և մատուցվելիք ծառայությունների ամբողջ ծավալի հարաբերակցության հիման վրա:

5. Վաճառքի ինքնարժեք

	2025թ.	2024թ.
	հազ. Դրամ	հազ. Դրամ
Աշխատակիցներին հատուցումներ	293,686	342,366
Վարձակալական վճարներ	15,915	16,874
Հիմնական միջոցների նորոգում և սպասարկում	2,866	2,774
Խորհրդատվություն	2,100	-
Նյութեր	1,517	2,733
Մաշվածություն և ամորտիզացիա	622	988
Ապահովագրություն	250	250
Այլ	-	414
	316,956	**366,399**

2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների թիվը կազմում էր 39 (2024թ-ին՝ 42):

6. Վարչական ծախսեր

	2025թ.	2024թ.
	հազ. Դրամ	հազ. Դրամ
Տնտեսական և գրասենյակային ծախսեր	2,692	1,856
Միջոցառումներ և հարակից ծախսեր	2,132	2,192
Հիմնական միջոցների նորոգում և սպասարկում	659	614
Մաշվածություն և ամորտիզացիա	514	511
Պալատի անդամակցության վճարներ	297	302
Կարդրերի վերապատրաստում	295	543
Չփոխհատուցվող հարկեր	208	176
Այլ	883	316
	7,680	**6,510**

7. Այլ եկամուտներ

	2025թ	2024թ
	հազ. Դրամ	հազ. Դրամ
Դեբիտորական պարտքի կորուստի հակադարձումից եկամուտ	1,900	2,020
Բանկային ընթացիկ հաշվի մնացորդին հաշվեգրված տոկոսային եկամուտներ	208	326
Այլ եկամուտներ	226	-
	2,334	**2,346**

8. Ֆինանսական եկամուտներ և ծախսեր

	2025թ հազ. Դրամ	2024թ հազ. Դրամ
Տոկոսային եկամուտ	124	104
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ	812	-
Ֆինանսական եկամուտներ	**936**	**104**
Տոկոսային ծախսեր	(5,955)	-
Փոխարժեքային տարբերություններից զուտ կորուստ	-	(186)
Ֆինանսական ծասխսեր	**(5,955)**	**(186)**

9. Շահութահարկի գծով ծախս

	2025թ հազ. Դրամ	2024թ հազ. Դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	14,829	7,510
Հետաձգված հարկի գծով (փոխհատուցում)/ծախս	(174)	555
	14,655	**8,065**

Ընթացիկ հարկի կիրառելի հարկային դրույքը 18% է:

10. Շահաբաժիններ

	2025թ հազ. Դրամ	2024թ հազ. Դրամ
Նախորդ տարվա կուտակված շահույթի բաշխում	40,000	80,000
Նախորդ տարվա շահույթի միջանկյալ բաշխում նախորդ տարում՝	-	(10,000)
	40,000	**70,000**

11. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Սարքավորումներ	Համակարգչային տեխնիկա	Տնտեսական գույք	Օգտագործման իրավունքով ստացված ՀՄ-ներ	Կառուցման ընթացքում գտնվող ՀՄ-ներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Առ 01 հունվարի 2024թ	1,149	15,781	11,094	-	-	**28,024**
Ավելացումներ	-	143	99	-	-	**242**
Օտարումներ	-	-	-	-	-	**-**
Առ 31 դեկտեմբերի 2024թ	**1,149**	**15,924**	**11,193**	**-**	**-**	**28,266**
Առ 01 հունվարի 2025թ	1,149	15,924	11,193	-	-	**28,266**
Ավելացումներ	-	61	3,261	5,931	208,440	**217,693**
Օտարումներ	-	-	-	-	-	
Առ 31 դեկտեմբերի 2025թ	**1,149**	**15,985**	**14,454**	**5,931**	**208,440**	**245,959**
Մաշվածություն						
Առ 01 հունվարի 2024թ	984	13,972	9,521	-	-	**24,477**
Տարվա ծախս	27	1,046	414	-	-	**1,487**
Օտարումներ	-	-	-	-	-	**-**
Առ 31 դեկտեմբերի 2024թ	**1,011**	**15,018**	**9,935**	**-**	**-**	**25,964**
Առ 01 հունվարի 2025թ	1,011	15,018	9,935	-	-	**25,964**
Տարվա ծախս	24	605	497	-	-	**1,126**
Օտարումներ	-	-	-	-	-	**-**
Առ 31 դեկտեմբերի 2025թ	**1,035**	**15,623**	**10,432**	**-**	**-**	**27,090**
Հաշվեկշռային արժեք						
Առ 01 հունվարի 2024թ	**165**	**1,809**	**1,573**	**-**	**-**	**3,547**
Առ 31 դեկտեմբերի 2024թ	**138**	**906**	**1,258**	**-**	**-**	**2,302**
Առ 31 դեկտեմբերի 2025թ	**114**	**362**	**4,022**	**5,931**	**208,440**	**218,869**

2025 թվականին Ընկերությունը ձեռք է բերել գրասենյակային տարածք, որը հաշվետու տարում ենթարկվել է վերանորոգման: Վերանորոգման ավարտից հետո Ընկերությունը իր գործունեությունը իրականացնելու է այդ գրասենյակային տարածքում:

622 հազար դրամ գումարով (2024թ-ին՝ 986 հազար դրամ) մաշվածության ծախսը գրանցվել է վաճառքի ինքնարժեքում, իսկ 504 հազար դրամ գումարով (2024թ-ին՝ 501 հազար դրամ)՝ վարչական ծախսերում:

12. Ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Համակարգչային ծրագիր	Դոմեյն	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Առ 01 հունվարի 2024թ	1,933	225	2,158
Ավելացումներ	-	-	-
Օտարումներ	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ	**1,933**	**225**	**2,158**
Առ 01 հունվարի 2025թ	1,933	225	2,158
Ավելացումներ	-	-	-
Օտարումներ	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2025թ	**1,933**	**225**	**2,158**
Ամորտիզացիա			
Առ 01 հունվարի 2024թ	1,931	175	2,106
Տարվա ծախս	2	10	12
Օտարումներ	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ	**1,933**	**185**	**2,118**
Առ 01 հունվարի 2025թ	1,933	185	2,118
Տարվա ծախս	-	10	10
Օտարումներ	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2025թ	**1,933**	**195**	**2,128**
Հաշվեկշռային արժեք			
Առ 01 հունվարի 2024թ	**2**	**50**	**52**
Առ 31 դեկտեմբերի 2024թ	**-**	**40**	**40**
Առ 31 դեկտեմբերի 2025թ		**30**	**30**

10 հազար դրամ գումարով (2024թ-ին՝ 10 հազար դրամ)՝ ամորտիզացիայի ծախսը ներառվել է վարչական ծախսերում: 2024թ 2 հազար դրամ գումարով ամորտիզացիայի ծախսը ներառվել է վաճառքի ինքնարժեքում:

13. Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)

(ա) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ

Ճանաչված հարկային ակտիվները կազմված են հետևյալ հոդվածներից՝

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2025թ	**2024թ**	**2025թ**	**2024թ**	**2025թ**	**2024թ**
Հիմնական միջոցներ	-	96	(485)	-	(485)	96
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	342	-	-	-	342
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,918	821	-	-	1,918	821
Զուտ հարկային ակտիվ/ (պարտավորություն)	**1,918**	**1,259**	**(485)**	**-**	**1,433**	**1,259**

(բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

հազ. դրամ	**1 հունվարի 2025թ**	**Ճանաչված շահույթ կամ վնասում**	**31 դեկտեմբերի 2025թ**
Հիմնական միջոցներ	96	(581)	(485)
Առևտրային դեբիտորական պարտքեր	342	(342)	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	821	1,097	1,918
	1,259	**174**	**1,433**

հազ. դրամ	**1 հունվարի 2024թ**	**Ճանաչված շահույթ կամ վնասում**	**31 դեկտեմբերի 2024թ**
Հիմնական միջոցներ	45	51	96
Առևտրային դեբիտորական պարտքեր	706	(364)	342
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,063	(242)	821
	1,814	**(555)**	**1,259**

14. Պաշարներ

	2025թ	2024թ
	հազ. Դրամ	հազ. Դրամ
Անավարտ ծառայություն	22,314	-
Վառելիք	161	1,721
Այլ նյութեր	817	167
	23,292	**1,888**

15. Իրական արժեքով չափվող ներդրումներ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբին է պատկանում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ներդրումային (ԿԱՄ ՊԱՖ) ֆոնդի C դասի 270.000 հատ փայերը (2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 270.000 հատ): «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ներդրումային ֆոնդի ակտիվների 99.841 (2024 թվականի 96.329 տոկոսը) ներդրված են ՀՀ պետական պարտատոմսերում: Փայերի իրական արժեքը որոշվել է ներդրված ակտիվների իրական արժեքի հիման վրա:

16. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2025թ.	2024թ.
	հազ. Դրամ	հազ. Դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	23,330	39,660
Դեբիտորական պարտքերի հնար.կորուս.պահուստ	-	(1,900)
Տրված կանխավճարներ	378	251
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	36	1,021
Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով	75	87
	23,819	**39,119**

17. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2025թ.	2024թ.
	հազ. Դրամ	հազ. Դրամ
Ընթացիկ հաշիվներ բանկում ՀՀ դրամով	54,211	39,309
Ընթացիկ հաշիվներ բանկում ԱՄՆ դոլլարով	3,646	-
Դրամական միջոցներ միասնական հաշվում	213	213
	58,070	**39,522**

Դրամական միջոցների կազմում ներառված են ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված միասնական հաշվում առկա մնացորդը: Այս հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ առկա է սահմանափակում՝ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 327 հոդվածի և առկա գումարները կարող են օգտագործվել առաջացող հարկային պարտավորությունները մարելու նպատակով կամ կարող են վերադարձվել Ընկերության ընթացիկ հաշվարկային հաշվին՝ համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո 20 օրվա ընթացքում:

18. Կանոնադրական կապիտալ

2025 և 2024 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,000 հազար դրամ մնացորդը ներառում է 1 հազար դրամ անվանական արժեքով 2,000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Բոլոր 2,000 հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված նրանց կողմից:

19. Վարկեր և պարտավորություններ

	2025թ.	**2024թ.**
	հազ. Դրամ	**հազ. Դրամ**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող բանկային երկարաժամկետ վարկեր	140,129	-
Ֆինանսական վարձակալության գծով ոչ ընթացիկ պարտավորություններ	3,449	-
	143,578	**-**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող բանկային երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս	11,297	
Ֆինանսական վարձակալության գծով ոչ ընթացիկ պարտավորությունների ընթացիկ մաս	1,169	-
	12,466	**-**

Բանկային վարկի և ֆինանսական վարձակալության միջոցներով ֆինանսավորվել է նոր գրասենյակային տարածքի և սարքավորումների ձեռքբերումը:

(ա) Պայմաններ և մարման ժամկետներ

Ստորև ներկայացված են չմարված փոխառությունների համար գործող պայմանները.

				31 դեկտեմբերի 2025թ.		**31 դեկտեմբերի 2024թ.**	
հազ. դրամ	***Արժույթ***	***Անվանական տոկոսա-դրույք***	***Մարման տարին***	***Անվանա-կան արժեք***	***Հաշվե-կշռային արժեք***	***Անվանա-կան արժեք***	***Հաշվե-կշռային արժեք***
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	8%	2025-2035	151,426	151,426	-	-
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն	ՀՀ դրամ	14.7%	2025-2029	4,618	4,618	-	-
				156,044	**156,044**	**-**	**-**

Ֆինանսական վարձակալության պարտավորության տոկոսադրույքի սուբսիդավորման արդյունքում տարեկան արդյունավետ տոկոսադրույքը կազմել է 4.7%:

(բ) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում

	Պարտավորություններ
հազ. դրամ	***Վարկեր և փոխառություններ***
Մնացորդն առ 1 հունվարի 2025թ	-
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	
Վարկերի և փոխառությունների ստացում	154,623
Վարկերի և փոխառությունների մարում	(3,015)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**151,608**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	**(927)**
Այլ փոփոխություններ	
Պարտավորությունների հետ կապված փոփոխություններ	
Անմիջապես մատակարարին վճարված ֆինանսական վարձակալության միջոցներ	4,775
Տոկոսային ծախս	5,955
Վճարված տոկոսներ	(5,141)
Սուբսիդավորված տոկոսներ	(226)
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ	**5,363**
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2025թ.	**156,044**

20. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2025թ.	**2024թ.**
	հազ. Դրամ	**հազ. Դրամ**
Կրեդիտորական պարտքեր շահաբաժնի գծով	40,000	-
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	22,163	18,052
Ստացված կանխավճարներ	17,190	-
Կրեդիտորական պարտքեր արձակուրդային գումարների փոխհատուցման գծով	10,658	4,562
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	144	45
	90,155	**22,659**

21. Պայմանական դեպքեր և պարտավորվածություններ

(ա) Դատական վեճեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը ներգրավված չէ դատական գործերում և հայցերում:

(բ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր մեկնաբանությունների առարկա են:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները:

22. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ընկերությունը 2025 թվականի մարտ ամսից իր գործունեությունը սկսել է ծավալել իր նոր գրասենյակային տարածքում:

23. Կապակցված կողմի գործարքներ

(ա) Վերահսկողություն

Խմբի վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի բաժնետեր պարոն Հովհաննես Պերտրոսյանը:

(բ) Գործարքներ ղեկավարության և ընտանիքի մտերիմ անդամների հետ

(i) Ղեկավարության վարձատրություն

Ստորև ներկայացված է ղեկավար անձնակազմի վարձատրությունը:

	2025թ.	**2024թ.**
	հազ. Դրամ	**հազ. Դրամ**
Վարձատրություն		
Աշխատավարձ	132,103	142,495
	132,103	**142,495**
Վարձակալություն		
Վարձավճար	4.800	4,200
	4,800	4,200
	136,903	**146,695**

(i) Այլ կապակցված կողմերի հետ գործարքներ

Ստորև ներկայացված է այլ կապակցված կողմերի հետ գործարքները:

հազ. դրամ	***Գործարքի գումարը 2025թ.***	***Գործարքի գումարը 2024թ.***	***Մնացորդը 2025թ.***	***Մնացորդը 2024թ.***
Մատուցված ծառայություններ				
Ընկերության բաժնետիրոջը պատկանող կազմակերպություն	57,300	60,000	-	5,730
Ստացված կանխավճարներ ծառայությունների համար				
Ընկերության բաժնետիրոջը պատկանող կազմակերպություն	28,650	-	17,190	-

24. Համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Խմբի ղեկավարության կողմից 2025թ հունվարի 31-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հովհաննես Պետրոսյան Տնօրեն		Արուսյակ Ազիզյան Գլխավոր հաշվապահ